ՀՏԴ 316.77:001.12/.18; 070:001.12/.18 Լրագրություն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Սամվել ԲԱԼԱՅԱՆ

Բանալի բառեր՝ *Նոր մեդիա, ավանդական հեռուստատեսություն, մարտահրավերներ, տեխնոլոգիական առաջընթաց:*

Ключевые слова: *Новая медиа, традиционное телевидение, вызов, технологический прогресс.*

Keywords: *New Media, traditional televisin, challange, technological pregress.*

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ АРЦАХСКОГО ОБЩЕСТВЕННОГО ТЕЛЕВИДЕНИЯ

С. БАЛАЯН

Сегодня в ежедневном потоке технологических революций телекомпания встала на путь коренных преобразований. Действительно, традиционное телевидение изо дня в день уступает свои позиции. Зритель диктует изменения, удовлетворения современных требований. В противном случае, необратим проигрыш интернету и полное исчезновение. В армянской медиасфере Арцахскому общественному телевидению предстоит сделать многое, чтоб уверенно встать в один ряд с другими телекомпаниями. Вызовы становятся серьезнее, когда речь заходит о технологическом прогрессе и, соответственно, о развитии новых медиа.

THE DEVELOPMENT PERSPECTIVES OF ARTSAKH PUBLIC TELEVISION

S. BALAYAN

In the everyday flood of technological revolutions today's television stations have taken the way full of revolutions. The reality is that traditional TV is losing its position every day. The viewer demands to change and meet the modern requirements. Otherwise, the TV will irrevocably lose in the competition with the Internet and disappear. In order to stand firmly alongside other TV companies of the Armenian media field, the Public Television of Artsakh has still a lot to do. Challenges are becoming more serious when it comes to promoting technology and, consequently, the development of new media.

Տեխնոլոգիական հեղափոխությունների ամենօրյա հեղեղի մեջ այսօր հեռուստարնկերությունները բուռն հեղափոխությունների ճանապարհ են բռնել: Իրականություն է, որ ավանդական հեռուստատեսությունն ամեն օր զիջում է իր դիրքերը: Հեռուստադիտողը թելադրում է փոխվել, բավարարել ժամանակակից պահանջները: Հակառակ դեպքում՝ անդառնալիորեն պարտվել ինտերնետին ու վերանալ: Հայկական մեդիադաշտում Արցախի Հանրային հեռուստարնկերությունը լուրջ անելիքներ ունի՝ վստահաբար կանգնելու մյուս հեռուստարնկերությունների կողքին: Մարտահրավերները ավելի են լրջանում, երբ խոսքը տեխնոլոգիական առաջընթացի և, ըստ այդմ, նոր մեդիայի զարգացման մասին է:

Հեռուստատեսային տեխնոլոգիաները վիթխարի զարգացում են ապրում՝ թվային տեսախցիկներ, մոնտաժման համակարգչային համակարգեր, թվային հեռարձակման միջոցներ, հեռուստատեսային վիրտուալ տաղավարներ, իրական նկարահանումների և համակարգչային գրաֆիկայի համադրում: Իհարկե, հեռուստատեսային արտադրության մեջ տեխնոլոգիական այս զարգացումները միայն աննշան մասն են կազմում՝ նոր մարտահրավերներ նետելով հեռուստատեսային արտադրանք ստեղծողների համար [1]: 20-րդ դարի հանճարեղ կինոռեժիսոր Ֆեդերիկո Ֆելլինին այսպես է ատահայտվել. - «Հեռուստատեսությունը կինոմատոգրաֆիայից բոլորովին տարբեր մի բան է: Եվ ես ուղղակի չգիտեմ, թե ինչպիսին պետք է լինեն նրա համար աշխատող հեղինակները» [2]:

Ստեղծագործական առումով ինչ սկզբունքով առաջնորդվել. Հարցը շարունակում է բանավեճի առարկա մնալ հեռուստատեսային շատ հեղինակների համար: Արցախի Հանրային հեռուստարնկերությունը ունենալով լրագրողական մեծ թիմ՝ այսօր կանգնած է ստեղծագործական ու արդի տեխնոլոգիաների »հեռուստատեսային« պարտադրանքի առջև: Որակական տեսանկյունից արդյունավետության մասին կարելի է խոսել այն դեպքում, երբ հաղորդակցության արդյունքը համապատասխանում է հեղինակի կողմից ի սկզբանե սահմանված նպատակին: Տեղեկատվության քանակական ասպեկտը հանդես է գալիս որպես տեղեկատվության գիտական ճանաչողության ամենապարզ մակարդակ [3]:

Արցախի հանրային հեռուստատեսության եթերը վերջին երկու տարիներին հիմնականում ապահովվում է ուղիղ եթերի շնորհիվ: Ժամը 17.10-ից մինչև 19.40-ը ,Ողջույն Արցախ՞՞ հեռուստանախագծի շրջանակներում հաղորդավարները ներկայացնում են օրվա անցուդարձը: Հաղորդումը սկսվում է Օրացույց էջով: Այն ամենօրյա հեռուստաշարք է, որը ներկայացնում է Արցախի,

Հայաստանի ու, առհասարակ, աշխարհի՝ օրվա կարևոր իրադարձությունները, պատմական անցքերը: Դրան հաջորդում են արցախյան իրականությունն արտացոլող տարբեր հաղորդաշարեր ու ռեպորտաժներ, որոնց մուտքը եթեր ապահովվում է հաղորդավարի միջոցով: Եթերաժամը հարստացնում է նաև հարցազրույցը: Ուղիղ եթերում, տաղավարում հյուրընկալվում են քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային ու մարզական ոլորտների ներկայացուցիչներ: Այնուհետև ուղիղ եթերում՝ ժամը 19-ին, Օր լրատվական ծրագրից հետո, եթերը շարունակում է Հարց Մասնագետին էջը: Այն թոք շոուի մինի տարբերակ է, երբ հաղորդավարները սուր աչքով դիտարկում են մասնագիտական վերլուծություն պահանջող խնդիրներ, հաճախ հարցախույզին մասնակցում են նաև հեռուստադիտողները: Քննարկվող թեմաներն ու հարցերի շրջանակը բավականին լայն են: Այդուհանդերձ եթերը նորություն է պահանջում, ժամանակն էլ հուշում է, որ նախագիծը սպառում է իր ասելիքը:

Հեռուստաընկերությունը պետք է հնարավորինս մրցունակ լինի իր նպատակային լսարանի ուշադրությունը գրավելու համար: Անշուշտ, յուրաքանչյուր հեռուստաընկերություն ջանում է արձագանքել կարևոր իրադարձություններին (բազմաթիվ և բազմաժանր մատուցման ձևերով)[4]:

Հանրային հեռուստատեսությունն իր լսարանի պահանջները լիարժեք բավարարելու համար բազմաթիվ խնդիրներ ունի: Հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Նորեկ Գասպարյանի խոսքով, ամեն տարի նոր սարքավորումներ են ձեռքբերում, տեխնիկական հնարավորությունների առումով առաջընթաց գրանցվում է, սակայն այսօր մեծ ծախսեր է պահանջում ժամանակակից հեռուստատեսությունը: Եթե տարվա կտրվածքով ծախսվում է շուրջ 55,000 ամերիկյան դոլարին համարժեք դրամ սարքավորումների համար, պետք է ծախսել շատ ավելին, որովհետև ժամանակակից հեռուստատեսությունը անընդհատ նոր պահանջներ է առաջադրում: Այլ կերպ տեղ ունենալ այլ հեռուստաընկերությունների կողքին հնարավոր չէ: Ունեն ոչ թե մասնագետների խնդիր, այլ բազմաթիվ ոլորտներում համապատասխան մասնագետները իսպառ բացակայում են: Դա վերաբերում է ժամանակակից ինժեներական լուծումներին, վերաբերում է լրագրողներին և մարդկանց, ովքեր իրականում հասկանում են ժամանակակից հեռուստատեսության քաղաքականությունը:

Այն որ լրատվական ծրագրերում քաղաքական թեմատիկան պակասում է, սա քննարկման ենթակա չէ, կարծում է հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահը: Իհարկե Օր լրատվական ծրագիրը առաջ է ընթանում հստակ մշակված քաղաքականությամբ, ընդգրված են բոլոր բնագավառները՝ տնտեսականից մինչև մշակույթ: Լրատվական քաղաքականության հիմքերից մեկը ազատագրված տարածքներն են՝ քարոզչության առումով: Լրատվական ծրագրում մեծ ուշադրություն է դարձվում ազատագրված տարածքներին, վերաբնակեցմանն ու ունեցած խնդիրներին: Յուրաքանչյուր արցախցի պետք է տեսնի, որ այդ տարածքները մատված չեն անտերության, որ այդ տարածքներում մարդիկ ապրում են, կառուցվում են տներ ու դպրոցներ, ծնվում են երեխաներ: Այն տրամաբանությամբ են ռեպորտաժները կառուցվում, որ ազատագրված տարածքները դա հենց Արցախի տարածքներն են, պարզապես շատ ավելի երիտասարդն են, քան մյուս շրջանները: Մյուս կողմից հեռուստատեսության ներկայությունը մեծ ոգեվորություն է այդտեղ ապրող մարդու համար: Այլ բան է նրանց համար բնակարան կառուցումը, բոլորովին այլ՝ նրանց մի քիչ գովերգելը, նրանց մասին ռեպորտաժ պատրաստելը: Այլ բան է, երբ Արցախի համեմատաբար երիտասարդ քաղաքացին տեսնում է իրեն էկրանից, այլ տեսանկյունից, և բնականաբար արժեվորում է անցած ճանապարհն ու ամրապնդում հետագա քայլերի անհրաժեշտությունը: Սա հաջողված քաղաքականություն է, որը վերջին տարիներին իրականացնում է Արցախի հեռուստատեսությունը:

2015 թվականին Բերձորում բացվել է «Օր» լրատվական ծրագրի առաջին թղթակցական կետը: Իհարկե ունեցած տեխնիկական ու մասնագիտական սուղ միջոցների պարագայում էլ թղթակցական կետը շուրջ մեկ տարի աշխատել է: Օպերատորական ու մոնտաժի աշխատանքներն իրականացնում էր Արամ Մուրադյանը, լրագրողը Արուս Գալստյանն էր: Թղթակցական կետի լիարժեք գործունեությունը սակայն կասեցվել է մի շարք պատճառներով: Առաջին հերթին մասնագիտական կատարելագործում այդպես էլ տեղի չի ունեցել, ապա թղթակցական կետը ունեցած թույլ տեխնիկական միջոցներով անկարող էր ապահովել լրատվական ծրագրի գոնե նվազագույն պահանջները: Օպերատիվությունն իսպառ բացակայում էր, խնդիրների շարքը լրացնում է նաև համացանցային թույլ կապը:

Հայկական՝ երկրորդ հանրապետությունում շարունակվող լայնածավալ շինարարական աշխատանքները՝ ճանապարհաշինություն, բնակարանաշինություն, ենթակառուցվածքների արդիականացում և, ավելի ստույգ, տնտեսության արդիականացման աշխատանքները երկրորդ պայն են մղում հեռուստատեսությանը: այն իմաստով, որ Արցախի կառավարությունն առայժմ համեստ միջոցներ է ներդնում հեռուստատեսության առաջընթացն ապահովելու համար: Այդուհանդերձ, հանրայինի լրատվական քաղաքականության հիմնական թիրախը պետականաշինության

գործընթացն է, արցախցիների խաղաղ ու ստեղծագործ աշխատանքը: Արցախցիները բավականին հանդարդ ժողովուրդ են, իրադարձությունները, դեպքերը չսրելու սովոր, ավելի հարմարվող իշխանության կողմից տարվող քաղաքականության նկատմամբ: Այս տեսանկյունից հեռուստատեսության խնդիրը դժվարանում է այն առումով, որ խնդիրների մասին բարձրաձայնողները շատ չեն, իսկ հեռուստատեսությունը ենթադրում է խոսք, պրոֆեսիոնալ լրագրողը խնդիրը վերհանելու և այն ժամանակին լուծելու հնարավորություն:

Հեռուստատեսային ծրագիրը հեռուստատեսային ողջ գործընթացի հանրագումարն է՝ ամբողջական տեսքով: Այլ կերպ ասած, »ծրագիրը էկրանային պարբերականների՝ տնտեսապես, գաղափարապես և քաղաքականապես սահմանված բովանդակային ձևն է՝ տարածության և ժամանակի մեջ կազմակերպվող, տարբեր թեմաներով և ժանրերով նյութեր՝ պայմանավորված ալիքի յուրահատկությամբ, նյութատեխնիկական հնարավորություններով, արտադրական ստեղծագործության կազմակերպման մակարդակով և ուղղված է դասակարգված լսարանին« [5]:

Արցախի հանրային հեռուստատեսությունում քաղաքական հաղորդաշարը միանշանակ չի կայանում: Այս օղակը թույլ է ոչ հեռուստատեսության մեղքով: Հաջողված քաղաքական հաղորդաշար ունենալու համար պետք է ունենալ լավ քաղաքագետներ, ովքեր կկարողան շատ ավելի արագ ընկալել ժամանակը, ավելի շուտ տեսնել աշխարհում տեղի ունեցող անցուդարձը, գնահատել երկրի՝ արտաքին մարտահրավերներին դիմակայելու հնարավորությունը: Նման մասնագետների պակաս Արցախում կա: Իհարկե հեռուստատեսությունը փորձեր, դաշտը բաց չթողնելու համար, կատարում է: Այդ աշխատանքներում տարբեր տարիներին ընդգրկվել են հայտնի քաղաքագետներ, վերլուծաբաններ. ԼՂՀ նախագահի աշխատակազմի տեղեկատվության և հասարկայնության հետ կապերի բաժնի պետ Դավիթ Բաբայան, Ալեքսանդր Մանասյան, Հրաչ Արզումանյան, Արցախի արտաքին քաղաքական գերատեսչության պատասխանատուներ: Ներգրավված մարդկանց շրջանակը փոքր է, ասելիքը որքան նույնը, այնքան տարբեր: Այդուհանդերձ հեռուստադիտողը պահանջում է նոր դեմք ու նոր խոսք, իսկ երկիրը այդ հարցում թերանում է, բնականաբար թերանում է նաև հեռուստատեսությունը: Արցախի հեռուստադիտողը երանությամբ թե նախանձով է հետևում այլ հեռուստաընկերությունների ամենօրյա քաղաքական վերլուծական հաղորդաշարերին հարցազրույցներին քաղաքական ենթատեքստով:

Անելիքները հեռուստատեսությունում շատ են: Ցավոք, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության պատճառով և, վերջին տարիների սրացումների ֆոնին, մարդկային ու տնտեսական կորուստները զարգացման լուրջ հեռանկարներ չեն բացում հանրայինի կարգավիճակ ունեցող երկրի միակ հեռուստատեսության համար: Ֆինանսական սուղ միջոցները խանգարում են ոչ միայն բարձրակարգ մասնագետներ հրավիրել, այլեվ ունենալ ժամանակակից պահանջներին համապատասխան տաղավարներ:

Առանց համապատասխան քայլերի հնարավոր չէ տեղ ունենալ մյուս հեռուստաընկերությունների կողքին: Համապատասխան մասնագետների ու տեխնիկական ժամանակակից հնարավորությունների պակասը հեռուստատեսության թիվ մեկ խնդիրն են, և զարգացման ավելի ուրախ հեռանկար առայժմ չի ուրվագծվում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վանիկ Հակոբյան, Հեռուստատեսային հաղորդակցության արդյունավետությունը
2. Ֆելինի Ֆեդերիկո, Կինորարում, Երևան, «Սովետական գրող», 1988, էջ 189
3. Урсул А. Д., Природа информации, Москва, 1968, стр. 58.
4 Борецкий Р. А. О некоторых вопросах программирования. Доклад на конференции: Принципы многопрограммного телевидения, М., 2000, с. 39-40
5. Борецкий Р. А. В Бермудском треугольнике ТВ //http//www. pseudology.org

Տեղեկություններ հեղինակի մասին.

Ս. Բալայան – ԵՊՀ մագիստրոս, ԱրՊՀ Հայ գրակ. և լրագ.ամբիոնի ասիստենտ
e-mail: Samvel_artv@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը: